ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՆԱԽԱԳԱՀ**

«17» Ճարտի 2020թ. № 21997-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ԱՐԹՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասով, «Մաքսային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը գործող «Մաքսային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի թիվ 15/2020 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական կարգապահությունը խախտելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևմտյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության և մուտքերի համակարգման բաժնի ավագ մաքսային տեսուչ Արթուր Խաչատուրի Սիմոնյանի նկատմամբ կիրառել «դիտողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևմտյան մաքսատուն-վարչության պետ Տիգրան Զաքարյանին՝ միջոցներ ձեռնարկել 5100011/151019/0000531353 մուտքի մաքսային օրդերում մաքսային արժեքի մասով փոփոխություններ կատարելու և թերի վճարված մաքսային վճարները բռնագանձելու ուղղությամբ:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ